

**Հետաքրքրության արտահայտման
հրավեր խորհրդատվական ծառայությունների մատուցման համար**

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊՀ
Հայաստանի Հանրապետություն Համայնքների Գյուղատնտեսական ռեսուրսների
կառավարման և մրցունակության ծրագիր

Վարկ No. 4891-AM

**ՀԳՌԿՄ ծրագրով հիմնված անասնաբուժական սպասարկման կենտրոնների
գնահատման ծառայություններ**

Պայմանագրի հղում՝ **CARMAC-CS-16/130 (VSC)**

1. Հայաստանի Հանրապետությունը Միջազգային զարգացման ընկերակցությունից (ՄՁԸ) ստացել է վարկ «Համայնքների Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» (ՀԳՌԿՄ) իրացման նպատակով և նախատեսվում է այդ գումարների մի մասով կատարել ՀԳՌԿՄ ծրագրով հիմնված անասնաբուժական սպասարկման կենտրոնների (ԱՍԿ) գնահատման ծառայությունները:

2. Խորհրդատվական ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ) ներառում են՝ ՀԳՌԿՄ ծրագրի շրջանակում ստեղծված առաջին 3 անասնաբուժական սպասարկման կենտրոնների գործունեության անկախ գնահատումը՝

Գնահատման այն մասը, որը պետք է իրականացվի ԱՍԿ-ների շրջանում, պետք է թույլ տա տեղեկատվություն հավաքել հետևյալ հարցերի վերաբերյալ.

- Բացահայտել գործող ԱՍԿ-ների սպասարկման աշխարհագրական ծածկույթը (յուրաքանչյուր ԱՍԿ-ի սպասարկած համայնքների քանակը և անունները),
- Բացահայտել գործող ԱՍԿ-ների ծառայություններից օգտվողների շրջանակը և քանակը
- Պարզել գործող անասնաբուժական սպասարկման կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների տեսակները,
- Բացահայտել գործող անասնաբուժական սպասարկման կենտրոնների գործունեության զարգացման պոտենցիալը (ծառայությունների ավելի լայն շրջանակ մատուցելու հնարավորություն՝ ներառելով նոր հաճախորդներ, մատուցվող ծառայությունների նոր բնագավառներ, ինչպիսին, օրինակ, բուսաբուծությունն է և այլն),
- Բացահայտել գործող անասնաբուժական սպասարկման կենտրոնների գործունեության զարգացման խնդիրները և կարիքները:

Գնահատման մյուս մասը պետք է իրականացվի ԱՍԿ-ների գործունեության ազդեցության դաշտում գտնվող սուբյեկտների շրջանում: Նրանցից պետք է տեղեկություն ստանալ այդ կենտրոնների գործունեության տարբեր ասպեկտների վերաբերյալ: Պետք է բացահայտել անասնաբուժական սպասարկման կենտրոնների շահագիգիռ կողմերին և շահառուներին և նրանցից ստանալ համապատասխան տեղեկությունները:

3. Առաջադրանքի ընդհանուր տևողությունը երեք ամիս է, սկսած 2016թ. հունիսից:

4. «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (ԳԾԻԳ ՊՀ) հրավիրում է այդ բնագավառում համապատասխան որակավորմամբ և փորձով մասնագիտացված տեղական կազմակերպություններին ցուցաբերել իրենց շահագրգռվածությունը ԱՍԿ գնահատման ծառայություններն իրականացնելու համար:

5. Շահագրգիռ խորհրդատվական կազմակերպությունը պետք է ունենա իրավաբանական անձի կարգավիճակ: Կազմակերպությունը պետք է ունենա ծրագրերի գնահատման առնվազն 5 տարվա փորձ: Կազմակերպությունը պետք է ունենա նշված աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ մասնագիտացված աշխատանքային խումբ կազմված խմբի ղեկավարից և երկու մասնագետներից: Խմբի ղեկավարը պետք է ունենա բարձրագույն մասնագիտական կրթություն Իրավաբանության, Տնտեսագիտության կամ Սոցիոլոգիայի բնագավառներում, ինչպես նաև մասնագիտական մեծ փորձառություն ծրագրերի գնահատում իրականացնելու, տվյալները վերլուծելու և եզրակացություններ կազմելու համար: Խմբում ընդգրկված մասնագետները պետք է ունենան բարձրագույն մասնագիտական կրթություն Սոցիոլոգիայի, Տնտեսագիտության կամ Իրավաբանության բնագավառներում և գնահատումներ իրականացնելու փորձ, ինչպես նաև անասնաբուժական բարձրագույն կրթություն և անասնաբուժության բնագավառում մասնագիտական փորձ: Խմբի ղեկավարը և մասնագետները պետք է ունենան հայերենի գերազանց և անգլերենի աշխատանքային իմացություն, ինչպես նաև տեխնիկական գործիքների և համակարգչային ծրագրերի իմացություն:

6. Կարճ ցուցակի ընտրության չափանիշները հետևյալն են՝ (i) կազմակերպության հիմնական գործունեություն և ընդհանուր փորձ – 40 միավոր, (ii) նմանատիպ աշխատանքների կատարման առնվազն 5 տարվա փորձ – 60 միավոր:

7. Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային Բանկի ուղեցույցների 1.9 կետին. ՎՋՄԲ վարկի և ՄՁԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում Համաշխարհային Բանկի Վարկառուների կողմից, հունվար 2011 («Խորհրդատուների ընտրության ուղեցույց»), որտեղ մասնավորապես նշվում է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

8. Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Խորհրդատուների ընտրության ուղեցույցով սահմանված Խորհրդատուների Որակավորման վրա հիմնված ընտրության ընթացակարգով:

9. Լրացուցիչ տեղեկություններ կարող են ձեռք բերվել ստորև նշված հասցեում, աշխատանքային օրերին, ժամը 10:00-ից մինչև 17:00:

10. Հետաքրքրված կազմակերպությունները պետք է հայտնեն իրենց շահագրգռվածության մասին և ներկայացնեն համապատասխան որակավորման մասին տեղեկություններ (գովազդային և տպագիր նյութեր, կատարված աշխատանքների նկարագրություններ, տեղեկություններ փորձի և աշխատակազմի մասին) ԳԾԻԳ ՊՀ գնումների բաժին մինչև 2016թ. հունիսի 1-ը: Փաստաթղթերը ներկայացնելու, ինչպես նաև, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ստորև բերված հասցեով.

Երևան, Կոմիտաս փող. 54 Բ, 3-րդ հարկ;
Հեռ. 297301, 297302; Ֆաքս 297308;
Էլ-փոստ. info@arspiu.com